



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 20 ՅՈՒՆԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 16

ԱՂՕԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ճ՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ:
Տիրոջ ըսի. «Դուս ես Տէրս, քեզմէ գատ ուրախութիւն չունիմ»:
Ինչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդներով կ'առաջնորդէ զիս,
նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղմտանքիս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողմիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է,
հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,
որովհետեւ գիտեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:
Կեանքի նամբան ցոյց կու տաս ինձի.
Ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն է:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վձենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 15:1-58)



ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ (15:1-11)

Խօսելով ու ներկայացնելով ընկերային, բարոյական, եկեղեցական եւ պաշտամունքային հարցու շուրջ, Պօղոս Առաքեալ կ'անցնէի մէկ այլ նիւթի, որ վարդապետական հարց է, որովհետեւ Քրիստոնէական հաւաքքի ու վարդապետութեան կորիզը կը կազմէ: Ասկէ առաջ Պօղոս Առաքեալ, անցնող ամբողջ նամակի երկարութեան, անդրադարձաւ եւ իր թելադրութիւնները կապարեց Կորնթոսի համայնքին կապուած զանազան հարցերու վերաբերեալ, որոնք այս կամ այն ձեւով պառակտումներ յառաջացուցած, խումբերու վերածած էին համայնքի հաւաքացեալները: Ուստի Առաքեալը իր յորդորը, խրատականը, թելադրութիւնները կապարեց, որպէսզի ինչ որ ալ պիտի ընեն պարկեշտութեամբ եւ Աստուածահաճոյ ձեւով ընեն, սէրէ մղուած:

Իսկ այժմու շօշափելիք նիւթը, որ դարձեալ համայնքէն ներս փարբեր փեսակէտեր ըլլալուն, պարճառ դարձած էր պառակտութիւն, բաժանումի: Բայց Առաքեալը այս նիւթը կ'արձարձէ, ոչ միայն որովհետեւ այս նիւթը իբրեւ խնդրոյ առարկայ հասած էր Առաքեալին, այլ՝ որովհետեւ ամբողջ քրիստոնէական վարդապետութեան հիմքը կը կազմէ, ուստի եթէ շեղին ուղիղ ճանապարհէն ամբողջութեամբ շեղած կ'ըլլան ճշմարտութենէն:

Առաքեալը կը սկսի իր բացատրութիւնը նախ յիշեցնելով այն Աւերարանը որ ինք քարոզեց. «Կ'ուզեմ ձեզի յիշեցնել այն Աւերարանը իր իմ քարոզութեամբս ընդունեցիք եւ որուն հաւաքարիմ կը մնասք» (1 հմբ): Հեղաքրքրական է արտայայտութիւնը, որ ցոյց կու տայ, թէ մարդ արարածը ժամանակ առ ժամանակ պէտք է յիշեցուի, որովհետեւ յաճախ այնքան փարբեր բաներով կրնանք զբաղ ըլլալ, որ կը մոռնանք անհրաժեշտն ու ամենակարեւորը: Այս պարագային ալ, շարժամանակ չէր անցած Առաքեալին Կորնթոս գալէն ու Աւերարանը քարոզելէն, բայց արդէն կարծէք սկսած էին մոռնալ Անոր, այսինքն՝ Աւերարանին բովանդակութիւնը: Այնպէս կը թուի թէ անոնք հաւաքարիմ մնացեր են այդ Աւերարանին, բայց ըստ երեւոյթին, իրենց ապրելակերպն ու մտածելակերպը կու գան ցոյց տալու, թէ Աւերարանը մոռցեր են, ուստի Առաքեալը պէտքը կը զգայ յիշեցնելու իրենց:

Աւերարան կը նշանակէ բարի լուր, բայց պարզապէս բարի լուր մը չէ, այլ փրկութիւն շնորհող, պարզեւող Աւերարան մը, բարի լուր մը: Բայց այդ փրկութիւնը կարելի է ձեռք ձգել եթէ երբեք պահեն այնպէս ինչպէս քարոզուած էր իրենց, այլապէս գուր փեղ հաւաքացած կ'ըլլան (2 հմբ): Սա կը նշանակէ թէ Աւերարանի քարոզութիւնը լսելը բաւարար չէ, եթէ երբեք լսուածը չպահուի, իսկ պահել միայն չի նշանակեր մտքի մէջ պահել, այլ նաեւ գործադրել: Հեղաքրքրական է, սակայն, ի՞նչ պիտի պահէին ու ինչպէ՞ս: Որովհետեւ ամբողջ Աւերարանի բովանդակութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ. «Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, ինչպէս Սուրբ գիրքերը կ'ըսէին, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ, դարձեալ Սուրբ գիրքերուն համաձայն» (3-4 հմբ): Տակաւին, կարելի չէ Աւերարանը ընդունիլ եւ մերժել Քրիստոսի յարութիւնը: Ուրեմն, Առաքեալը ըսել կ'ուզէ ինչ որ ասանդեցի ձեզի կը պահէք, բայց պէտք է ասանդուած ձեւով պահէք:

Պօղոս Առաքեալ այս Աւերարանը քարոզեց: Քարոզեց նախ ինք հաւաքալով եւ ընդունելով: Որովհետեւ կարելի է միայն քարոզել բայց չընդունիլ, որ կը նմանի խողովակի մէջէն անցնող ջուրին, իսկ Պօղոս Առաքեալի պարագային կը նմանի սքունքի մէջէն անցնող ջուրին: Ան քարոզեց այն ճշմարտութիւնը, որուն մասին անցեալին ըսուած էր մարգարէներու եւ Օրէնքի ճամբով, Աստուծոյ շունչով գրուած գիրքերը այդ մասին կը վկայէին: Այսպէղ հիմնականին մէջ Սուրբ գիրքերը ոչ թէ միայն Քրիստոսի մահն ու թաղումը պարզամեցին, այլ մանաւանդ՝ Անոր յարութիւնը: Այսպէղ ըսուածը նաեւ դաւանութիւն է, հաւաքամք է: Որովհետեւ որոշ է որ Քրիստոս մեռաւ, բայց ինչո՞ւ մեռաւ. «մեր մեղքերուն համար», այսինքն՝ մեր մեղքերը քաւելու համար: Ինչ որ մարդկային միտքը դժուար թէ ըմբռնէ այս ճշմարտութիւնը, բայց իրողութիւն ըլլալէ չի դադարիր, որուն միայն հաւաքը կ'ըմբռնենք: Ուստի Առաքեալին փոխանցածը հիմնուած է աստուածային վկայութեան վրայ: Իսկ «թաղուեցաւ» բացատրութիւնը կը շեշտուի, որպէսզի շեշտուի մարմնաւոր յարութեան պարագան: Անոր համար ալ մանրամասնութեամբ կը ներկայացուի Աւերարանիչներու կողմէ այս դէպքը: Տակաւին թաղուեցաւ, որպէսզի անով շեշտուի մահուան ստուգութիւնը, իսկ մահուան ստուգութեամբ շեշտուի Անոր մարդկային ճշմարիտ բնութիւնը: Իսկ երրորդ օրուան յարութիւնը, ըստ գրուածներուն: Որովհետեւ ըստ հրեական հասկացողութեան, մարդուն մարմինը կը սկսէր նեխիլ, փփիլ չորրորդ օրը (Յովի 11:39), ահա մարգարէութեան կապարումն էր որ փեղի կ'ունենար, որովհետեւ Մեսիային մարմինը փտութիւն պիտի չտեսեր:

Ոչ միայն աստուածային այլ նաև փակալին մարդոց կողմէ այլ վկայություններ կան, որոնք ակա-
նաբեւ եղան այդ դէպքին: Ուստի «**երեւցաւ Պեպրոսին եւ ապա փասնըերկու առաքեալներուն**» (5
հմբ): Այսպէղ Պեպրոսի անունը կ'առանձնանայ եւ առաջինը կը յիշարակուի, մի գուցէ որովհետեւ
առաքեալներու ցանկին մէջ յիշուած առաջին անունն է: Բայց կայ ուրիշ պարագայ մը, որովհետեւ
Պեպրոս առաքեալ այն անկեալ առաքեալն էր, որ կարիքը ունէր վերականգնումի, որպէսզի ինք այլ
կարենար դառնալ ու վերահասարակել իր եղբայրները (Ղուկ 22:32): Տակաւին, չհաշուած գերեզման
գալէ յետոյ այլ Յովհաննէսի հետ միասին, Աւեբարանիչը կ'ըսէ. «**Յովհաննէս փեսաւ եւ հաւարաց**», իսկ
Պեպրոս Առաքեալի պարագային «**ներս նայեցաւ եւ գերեզմանին մէջ միայն պարանքը փեսաւ. ըւ
զարմացած վերադարձաւ՝ մրածելով թէ ինչ պարահեցաւ**» (Ղուկ 24:12): Ահա այս վիճակի մէջ ինչու չէ
իրեն համար յարուկ յարուցեալ Փրկիչը երեւցաւ: «Երեւցաւ» որպէսզի Անոր երեսունը երեսակայութիւն
չըլլայ, այլ իրաւ: Իսկ այսպէղ Պօղոս Առաքեալ յիշարակելով այս անունները, որովհետեւ այս անուն-
ները ծանօթ էին Կորնթացիներուն, ուստի հեղինակաւոր անուններ: Բայց չէ որ Քրիստոսի յարութեան
առաջին վկաները կիներն էին: Այո, բայց որովհետեւ անոնք պաշտօնական հանգամանք չունէին,
առաւել եւս այդ օրերու մրայնութեան համաձայն կիներու վկայութիւնը դիւրին ընդունելի չէր,
որովհետեւ կը կասկածէին եւ այդպէս ալ պարահեցաւ Առաքեալները չհաւարացին (Ղուկ 24:11): Ապա
փասնըերկու առաքեալներուն: Խորքին մէջ առաջին անգամ երբ յարուցեալ Քրիստոս երեւցաւ 10
առաքեալներ էին, Թովմասը հոն չէր, իսկ Յուդա ինքզինք կախած էր: Տասնըերկու արքայայարութիւնը
ըսելու եղանակ մըն է: «**Յետոյ երեւցաւ միարեղ խմբուած հինգ հարիւրէ աւելի հետետորդներուն.
թէպէրեւ անոնցմէ ոմանք մեռած են, բայց շարերը ողջ են փակալին**» (6 հմբ): «**Այնուհետեւ երեւցաւ
Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն**» (7 հմբ):

Ի վերջոյ կ'երեւի նոյնինքն Առաքեալին, եւ Պօղոս Առաքեալ ինքզինք կը ներկայացնէ որպէս վի-
ժած (8 հմբ): Պօղոս Առաքեալ այս արքայայարութեամբ ըսել կ'ուզէ, թէ ինչպէս վիժած մը արժանի
չըլլար որեւէ անունի, նոյնպէս ալ ինք խորքին մէջ արժանի չէ այդ նոր քրիստոնէայ անունը կրելու, ու
այդ յարութեան վկան դառնալու:

Այսպէղ ինքզինք այնպէս կը ներկայացնէ Պօղոս Առաքեալ, թէ ինք Առաքեալներուն մէջ յետինն
է եւ արժանի չէ առաքեալ կոչուելու, այսինքն՝ իրեն համար առաքեալ ըլլալը պարզապէս կոչում մը չէ,
որով պէտք է պարծենայ: Արժանի չէ որովհետեւ Աստուծոյ եկեղեցին կը հալածէր: Բայց հիմա ինչ որ է
այդ բոլորը կը պարտի ոչ թէ իր անձին, այլ՝ Աստուծոյ շնորհքին: Իրեն փրուած այդ Առաքեալ ըլլալու
հանգամանքը, իշխանութիւնը Աստուծոյ շնորհքովն է: Եւ իրեն փրուած այդ շնորհքը ինք կրցաւ ի գործ
դնել եւ արդիւնք ունենալ: Առաքեալը ամէն ինչ Աստուծոյ կը վերագրէ, բայց նաև կայ մարդուս
բաժինը: Մարդուս բաժինն ալ անոր պարտաստակամ ըլլան է ընդառաջելու Աստուծոյ հրաւերին, որ
մեծ զին կը պահանջէ, եսի ուրացում:

Ի վերջոյ, ամենակարեւորը ոչ թէ ով է քարոզողը, այլ՝ նոյն Աւեբարանն է որ պէտք է քարոզուի,
որուն հաւարացին: Ինչո՞ւ անցեալ եղանակով: Որովհետեւ ըստ երեսոյթին անցեալին որ քարոզուեցաւ
անոնք հաւարացին, բայց հիմա արդէն շեղած են այդ ճշմարիտ հաւարքէն: